ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0009, ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1, 010 511 820, www.court.am

№ ԴԴ-2-Ե-9084

« 27 » հոկտեմբերի 2026թ.

«ՉԻՊ» ՍՊԸ-ԻՆ

(Հասցե՝ ք. Երևան, Դ. Դեմիրճյան փ. 27/1, բն. 39)

«ԴԱՎԹՅԱՆ ԴԻԱՆԱ ԱՐԱՐԱՏ» Ա/Ձ-ԻՆ

(Հասցե՝ ք. Երևան, Նոր Նորք Մինսկի 4/34)

«ՆԵՔՍԱ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ

ՊԱՐՈՆ ՍԵՐԳԵՅ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

(Հասցե՝ ՀՀ, քաղաք Երևան, Գրիգոր Լուսավորիչ 7)

«ՄՈԴԵՌԻ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ

ՊԱՐՈՆ ՀԱՅԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ

(Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վրացական 7, բն. 8)

«ԻԶԻԹԵՉ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ

ՊԱՐՈՆ ՌԱՖԱՅԵԼ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

(Հասցե՝ ք. Երևան, Շարուրի 28/1, բն. 6)

Սույնով ծանուցում եմ, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար համակարգչային սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/15» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտերում

արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, մասնավորապես՝

«ՉԻՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա.

- դիմում-հայտարարության մեջ (Հավելված N 1) լրացված չէ «Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)» դաշտը,

- իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևում (Հավելված N 1.3) լրացված չէ «Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)» դաշտը:

Ընդ որում, եթե մասնակցի կողմից ներկայացված հայտում ներառվող փաստաթղթերը հաստատվել են լիազորված անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթը (լիազորագիրը):

«Դավթյան Դիանա Արարատ» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտում առկա դիմում-հայտարարության (Հավելված N 1) մեջ «մասնակցի ռուսերեն լեզվով անվանումն է» դաշտում նշված չէ կազմակերպության կազմակերպաիրավական ձևը:

«ՆԵՔՍԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում.

- 10-րդ չափաբաժնի մասով Համակարգ մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, մասնավորապես՝ նշված է «Տեսակը՝ HDD (ներքին), չափսը՝ 3.5 դյույմ, ինտերֆեյս՝ SATA 3» մինչդեռ հրավերով սահմանված է «Տեսակը՝ HDD (արտաքին), չափսը՝ 2.5 դյույմ, ինտերֆեյս՝ առնվազն USB 3.0», նշված «9 30232231/502» թվերը և «6.0Gb/s, պտույտ՝ առնվազն 7200rpm, առնվազն 64MB cache» բառերն ավելորդ են, բացակայում են «USB մալուխ, համատեղելի Windows 10, 11 Pro օպերացիոն համակարգերի հետ» բառերը,

- 11-րդ չափաբաժնի մասով Համակարգ մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, մասնավորապես՝ նշված «11 30232231/504» թվերն ավելորդ են:

«ՄՈԴԵՌԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա դիմում-հայտարարության (Հավելված N 1) մեջ «մասնակցի ռուսերեն լեզվով անվանումն է» դաշտում նշված է մասնակցի հայերեն անվանումը, այնինչ՝ անհրաժեշտ է նշել մասնակցի ռուսերեն անվանումը:

«Իզիթեչ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում 13-րդ չափաբաժնի մասով Համակարգ մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, մասնավորապես՝ բացակայում են «Տեսակը՝ DDR4 (նախատեսված սեղանի համակարգիչների համար), հիշողության ծավալը՝ առնվազն 8GB» բառերը:

Վերոգրյալով պայմանավորված, և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/15» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11 կետը առաջարկում եմ մինչև սույն թվականի **հոկտեմբերի 28-ը ներառյալ** շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնում եմ, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում՝ հայտերը կգնահատվեն անբավարար և կմերժվեն:

Հարգանքով,
ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝

ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/15» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Ա. Հովհաննիսյան
Հեռ.՝ (+37410) 511-774